ՆԱԽՆԻՆԵՐԻ ԿԱՆՉԸ

Է–Ե

Բաղաձայնից հետո ե տառը արտասանվում է է, օրինակ՝ ուղերթ (ուղէրթ), տասներեք (տասնէրեք):

Բառամիջում յէ երկհնչյունը լսվելիս ե կարող է գրվել այն դեպքում, եթե նրանով սկսվող բառն սկզբից ստացել է ձայնավորով ավարտվող բառ կամ մասնիկ, օրինակ՝ կիսաեփ (կիսայէփ), ամենաերկար (ամենայէրկար):

Այդպես է նաև մի քանի օտար բառերում, օրինակ՝ պոետ, պոեզիա և այլն:

Կ և չ մասնիկներից հետո ե–ն յէ է արտասանվում, քանի որ ե–ն հաջորդում է ը ձայնավորին, օրինակ՝ կերգեմ – կ(ը)երգեմ, կեռա – կ(ը)եռա, չերազել – չ(ը)երազել:

Բառասկզբում է հնչյունը գրվում է է տառով, օրինակ՝ Էդգար, էջ, էակ, էկրան, էքսկուրսիա, նաև՝ էի, էիր, էր, էինք, էիք, էին:

Այս ընդհանուր կանոնից շեղվում են եմ օժանդակ բայի եմ, ես, ենք, եք, են ձևերը, որոնցում արտասանվող է–ն գրվում է ե տառով, օրինակ՝ գրում եմ, կարդում ես, երգում ենք, երգիչ ես, ուսուցիչ եք և այլն:

Բառամիջում և բառավերջում է գրվում է այն դեպքում, երբ է–ն արմատի սկզբնատառն է, օրինակ՝ վայրէջք, լայնէկրան, մանրէ, որևէ և այլն:

Մնացած դեպքերում բառամիջում և բառավերջում լսվող է–ն գրվում է ե, օրինակ՝ կես, օգնել, արծաթե, ափսե, Նարե:

Ե տառը բառասկզբում գրվում է այն դեպքում, երբ արտասանվում է յէ երկհնչյունը, օրինակ՝ եղնիկ, եղբայր, երկինք, երդում, եղունգ:

Հիշիր՝ երբևէ = երբ + և + է (ինչևէ, որևէ), երբևիցե = երբ + և + իցե (ինչևիցե, որևիցե):

Առաջադրանքներ

1. Լրացրո՛ւ բաց թողնված տառերը՝ *է* կամ *ե*:

Բար_կամ, *հն_աբան*, *վրա_ութ*, *գրում _ի*, *_լեկտրա_ներգիա*, *լուսն_ջք*, *ամենա_ջանիկ*, *բազմ_ռանգ*, *գետ_զր*, *լայն_կրան*, *վեր_լք*, *պո_տ*, *ան_ռևակայելի*, *մանր_*, *ամենա_ժան*, *իսկույն և_թ*, *պար_ոգ*, *նոր_կ*, *հով_կ*:

2. Բացատրի՛ր բառազույգերի գրության և արտասանության տարբերությունը:

ա) *վրաերթ–չվերթ*, բ) *կիսաեզրափակիչ–ծովեզր*, գ) *կիսաեփ–թերեփ*, դ) *ինքնաեռ–եռուզեռ*:

3. Տրված արմատներին ավելացնելով արմատ կամ ածանց՝ ստացի՛ր նոր բառեր:

Էջ, *էկրան*, *էժան*, *էներգիա*, *երաժիշտ*, *եղբայր*, *եղյամ*, *երազ*, *երես*, *եզր*:

4. Գրի՛ր կենդանիների և բույսերի անուններ, որոնք սկսվում են *ե*-ով և *է*-ով:

Կենդանիների անուններ	Բուսանուններ (բույսեր, ծառեր, թփեր)
եղնիկ	ելակ

5. Լրացրո՛ւ բաց թողնված *է* կամ *ե* տառը:

Հրազդանի_կ, ***դող_ոցք***, *պապն_շ*, *գոմ_շ*, ***_ջանիշ***, *առ_ևույթ*, ***վեր_լք***, *_ջմիածին*, ***ելև_ջ***, *_ռակ*, ***առ_ջ***, *բազկ_ռակ*, *_ակ*, *_լակ*, *ան_ական*, *ամենա_կար*, *ջերմա_ներգիա*, *ստոր_կրյա*, *վեր_լակ*, ***հն_ագեպ***, *առ_ջ*, *ան_ռեր*, *Վարդգ_ս*, ***մանր_***, *ինչև_*, *որևից_*, *_տել*:

6. Կազմի՛ր շարադրանք նախորդ առաջադրանքի թավ գրված բառերով:

7. Նախորդ վարժության բառերից ութը ենթարկի՛ր բառակազմական վերլուծության (խմբային աշխատանք):

8. Փակագծում տրված բառերում լրացրո՛ւ բաց թողնված *է* կամ

ե տառը և տեղադրի՛ր տեքստի համապատասխան նախադասություններում:

(ելև_ջները, առօր_ական, _ռազ, երբև_, չ_ք լինի, կոչել _ն, ամենուր_ք)

_____ այսպիսի բան լսած _____: Մեծ պապիս ձին մի օր կորչում է: Փնտրում է պապս, չի գտնում: Մութն ընկնում է: Ստիպված մոմաձրագը վառում է, դնում մեծ քարի վրա, որ շրջակայքն ամբողջովին երևա: Եվ հանկարծ ձիու խրխինջ է լսվում: Կանչում է պապս, ձին գալիս է, բայց որպես _____: Պապս շրջվում է, որ ձրագը վերցնի: Տեսնում է՝ այն աստղ է դարձել ու քարին պսպղում է: Էլ ձեռք չի տալիս:

Մեծ քարի շուրջը ամեն տարի՝ ուշ մայիսին, մի քանի օր գիշեր չի լինում: Լինում է միայն ցերեկ: Այդ ժամերին լսվում են եկեղեցու զանգերի_____, մարդիկ _____ գործերով են զբաղվում: _____ պսպղացող ծաղիկները լույս են արձակում. շատ նման են աստղերի: Դրա համար մարդիկ նրանց կոչել են աստղածաղիկներ (զույգային աշխատանք):

(ըստ Վ. Հակոբյանի)